



## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2017թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում (վերլուծություն)

2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 166353 գործարք, որոնց քանակը, 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, աճել է 6.7 %-ով:

2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 46350 օտարման գործարքների 73.9 %-ը կազմել է առուվաճառքը, 25.8 %-ը՝ նվիրատվությունը և 0.3 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների 39.4 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.6 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին, 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը աճել է 9.4 %-ով: 2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում անշարժ գույքի 13928 առուվաճառքի գործարքների 64.3 %-ն արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 20.9 %-ով:

2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)	
	11 ամիս 2016թ.	11 ամիս 2017թ.
<b>Կենտրոն</b>	428100	444000
<b>Արաբկիր</b>	357200	345400
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	283100	270900
<b>Նոր-Նորք</b>	254100	237200
<b>Ավան</b>	261700	251700
<b>Էրեբունի</b>	252350	240200
<b>Շենգավիթ</b>	257700	244600
<b>Դավթաշեն</b>	276700	257600
<b>Աջափնյակ</b>	251000	234450
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	244100	233700
<b>Նուբարաշեն</b>	157350	156900
<b>Միջինը Երևանում</b>	<b>274900</b>	<b>265150</b>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 3.5 %-ով:

2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 3749 բնակարան, որոնց քանակը 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 9.9 %-ով:

2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները .

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)
--------	----------	-----------------------

		<b>11 ամիս 2016թ.</b>	<b>11 ամիս 2017թ.</b>
<b>Արագածոտն</b>	Աշտարակ	116100	108100
	Ապարան	58500	58900
	Թալին	66800	63100
<b>Արարատ</b>	Արտաշատ	98800	93600
	Մասիս	115800	104700
	Վեդի	101700	93450
	Արարատ	77500	78000
<b>Արմավիր</b>	Վաղարշապատ	154200	133500
	Արմավիր	121200	103200
	Մեծամոր	87600	76700
<b>Գեղարքունիք</b>	Սևան	99400	84800
	Գավառ	60600	54500
	Մարտունի	107700	106900
	Վարդենիս	45300	45800
	Ճամբարակ	28800	28800
<b>Լոռի</b>	Վանաձոր	88600	83400
	Ստեփանավան	74800	69500
	Սպիտակ	99900	92200
	Ալավերդի	55800	50850
	Տաշիր	47400	47400
	Թումանյան	11000	11000
	Շամլուղ	8000	8000
	Ախթալա	20500	25700
<b>Կոտայք</b>	Աբովյան	155100	151200
	Նոր Հաճն	128550	121800
	Բյուրեղավան	108200	96900
	Եղվարդ	109800	106400
	Հրազդան	63900	58300
	Ծաղկաձոր	292400	289600
	Չարենցավան	85500	76800
<b>Շիրակ</b>	Գյումրի	109400	94800
	Արթիկ	67300	67300
	Մարալիկ	41100	41800
<b>Սյունիք</b>	Գորիս	123700	124500
	Կապան	95100	96000
	Սիսիան	92200	90200
	Մեղրի	83100	87900
	Քաջարան	94900	97600
	Դաստակերտ	8000	8000
<b>Վայոց ձոր</b>	Վայք	95100	92700
	Եղեգնաձոր	126200	122600
	Ջերմուկ	113200	103600
<b>Տավուշ</b>	Դիլիջան	115500	110800
	Իջևան	118550	113200
	Բերդ	60450	61400
	Նոյեմբերյան	50400	51000
	Այրում	31900	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup>

մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 4.8 %-ով:

2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 4518 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 1355, մարզերում՝ 3163: 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 18.2 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 21.7 %-ով, իսկ մարզերում՝ 16.8 %-ով:

2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ<sup>2</sup> և տնամերձի 400.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)	
	11 ամիս 2016թ.	11 ամիս 2017թ.
Կենտրոն	476200	476100
Արաբկիր	383100	381000
Քանաքեռ-Զեյթուն	295000	286100
Նորք-Մարաշ	319300	304600
Ավան	270600	264200
Էրեբունի	239800	235700
Շենգավիթ	255000	236000
Դավթաշեն	276100	270300
Աջափնյակ	250100	243100
Մալաթիա-Սեբաստիա	238100	235300
Նուբարաշեն	150800	150200
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286700	280200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 2.3 %-ով:

2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ<sup>2</sup> և տնամերձի 1000.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)	
		11 ամիս 2016թ.	11 ամիս 2017թ.

Արագածոտն	Աշտարակ	136200	132100
	Ապարան	60050	54200
	Թալին	69250	66900
Արարատ	Արտաշատ	100100	97900
	Մասիս	115100	111600
	Վեդի	102300	93800
	Արարատ	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	150300
	Արմավիր	107000	102250
Գեղարքունիք	Սևան	94950	93300
	Գավառ	57100	54900
	Մարտունի	96200	95300
	Վարդենիս	41100	41150
	Ճամբարակ	31100	31600
Լոռի	Վանաձոր	100900	99200
	Ստեփանավան	91200	85500
	Սպիտակ	114000	109900
	Ալավերդի	50300	50500
	Տաշիր	51900	47000
	Թումանյան	12000	12000
	Շամլուղ	14000	14000
	Ախթալա	30000	30000
Կոտայք	Աբովյան	157300	156000
	Նոր Հաճն	129800	127100
	Բյուրեղավան	120500	112700
	Եղվարդ	116100	110900
	Հրազդան	82600	74100
	Ծաղկաձոր	305000	301500
	Չարենցավան	83000	80500
Շիրակ	Գյումրի	119300	117300
	Արթիկ	63400	61200
	Մարալիկ	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	128700
	Կապան	100700	100900
	Սիսիան	96500	96000
	Մեղրի	84600	86800
	Դաստակերտ	11610	11800
Վայոց ձոր	Վայք	90150	88500
	Եղեգնաձոր	116750	114700
	Զերմուկ	131300	129600
Տավուշ	Դիլիջան	115600	114700
	Իջևան	123200	121100
	Բերդ	60100	57900
	Նոյեմբերյան	48300	48300
	Այրում	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 2.4 %-ով:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում օտարվել է 15448 միավոր (13487.08 հա) հող, որից Երևանում՝ 1059 միավոր (296.14 հա): Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 8790 միավոր (12564.51 հա), որից Երևանում՝ 119 միավոր (26.76 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 4601 միավոր (397.22 հա), որից Երևանում՝ 504 միավոր (24.36 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 1574 միավոր (107.97 հա), որից Երևանում՝ 398 միավոր (39.24 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 252 միավոր (252.96 հա), որից Երևանում՝ 33 միավոր (175.27 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 89 միավոր (88.22 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 136 միավոր (72.22 հա), որից Երևանում՝ 4 միավոր (27.30 հա),
- ջրային հող՝ 5 միավոր (0.77 հա),
- անտառային հող՝ 1 միավոր (3.21 հա) մակերեսով Երևանում:

2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում օտարված հողերից 12608 միավորի (11898.89 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 876 միավոր (85.25 հա), նվիրատվության գործարք՝ 2755 միավոր (1554.00 հա), որից Երևանում՝ 155 միավոր (210.00 հա) և փոխանակության գործարք՝ 85 միավոր (34.19 հա), որից Երևանում՝ 28 միավոր (0.89 հա):

Հանրապետությունում 2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին, 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը աճել է 4.8 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 1.6 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 12.5 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 62.5 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 5472.85 հա, որից 5397.81 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 25.3 %-ը կամ 3187 միավորը (2634.30 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 242 միավոր (7.55 հա), իսկ 73.8 %-ը կամ 9307 միավորը (9259.00 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 624 միավոր (77.34 հա): 2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել է վարձակալության իրավունքի վաճառքի 114 գործարք (5.59 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	6	0.97	87	2.49	149	4.09	76	15.76	23	11.09	330	17.04	193	27.36
Արագածոտն	237	613.19	20	1.21	43	3.35	55	3.12	922	1057.67	2	0.01	222	27.24	11	1.07
Արարատ	169	355.40	11	4.07	66	4.36	45	1.44	908	472.98	7	1.16	473	41.72	62	1.44
Արմավիր	78	241.03	14	13.45	20	1.67	36	0.62	910	5156.79	15	3.79	527	54.04	28	0.90
Գեղարքունիք	71	69.81	23	6.44	109	11.91	118	12.76	630	367.79	16	2.69	142	15.89	36	3.71
Լոռի	32	23.72	14	2.71	60	0.58	116	6.64	551	418.26	5	1.15	65	6.39	41	1.86
Կոտայք	301	502.63	15	2.31	458	30.57	142	6.17	1147	645.16	11	5.77	639	53.64	88	5.04
Շիրակ	33	58.45	6	14.21	51	3.00	51	2.73	355	329.64	1	0.60	93	9.24	16	0.39
Սյունիք	26	35.65	14	3.57	35	0.65	28	2.38	162	169.90	3	1.29	76	5.94	19	0.42
Վայոց ձոր	147	504.85	9	2.43	26	1.91	31	1.16	100	202.24	2	0.48	41	3.80	17	0.55
Տավուշ	55	30.98	17	7.05	41	2.35	51	1.70	204	86.63	0	0.00	80	8.54	23	1.09
Ընդամենը	1149	2435.71	149	58.42	996	62.84	822	42.81	596 5	8922.82	85	28.03	2688	243.48	534	43.83

Ստորև ներկայացվում է 2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)		
Երևան	150	3.44	4	0.96	65	0.82	81	1.66	92	4.11	0	0.00	2	0.01	22	1.67	68	2.43
Արագածոտն	7	0.21	2	0.18	2	0.02	3	0.01	347	551.65	236	544.19	18	1.03	41	3.33	52	3.10
Արարատ	29	4.08	4	3.27	12	0.16	13	0.65	240	233.11	147	227.32	7	0.80	54	4.20	32	0.79
Արմավիր	14	0.22	2	0.09	4	0.04	8	0.09	132	253.77	76	238.25	12	13.36	16	1.63	28	0.53
Գեղարքունիք	35	1.39	3	0.32	12	0.41	20	0.66	274	94.88	59	65.17	20	6.12	97	11.49	98	12.10
Լոռի	65	5.53	2	1.84	26	0.30	37	3.39	157	28.12	32	23.72	12	0.86	34	0.29	79	3.25
Կոտայք	95	2.26	2	0.55	75	1.58	18	0.13	809	509.71	289	472.91	13	1.77	383	28.99	124	6.04
Շիրակ	27	1.15	1	0.70	11	0.15	15	0.30	111	77.14	30	58.35	5	13.51	40	2.85	36	2.43
Սյունիք	22	1.40	1	1.23	17	0.07	4	0.10	79	40.28	24	35.08	13	2.34	18	0.58	24	2.28
Վայոց ձոր	4	0.152	0	0.00	1	0.002	3	0.15	207	510.19	145	504.84	9	2.43	25	1.91	28	1.01
Տավուշ	28	0.63	0	0.00	17	0.57	11	0.06	135	41.41	54	30.94	17	7.05	24	1.78	40	1.64
Ընդամենը	476	20.462	21	9.14	242	4.122	213	7.2	258 3	2344.37	109 2	2200.7 7	128	49.28	754	58.72	609	35.60

Հանրապետությունում 2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 57 գործարք (234.93 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին, 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների

քանակն աճել է 37.6 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 8.9 %-ով, իսկ մարզերում աճել է 40.2 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 38.8 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 45.3 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 19.6 %-ով, արդյունաբերական նշանակության հողերի նկատմամբ՝ 88.2 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	195	407.04	40.3	1540.0	424.6	561	373.52	365.0	12000.0	3386.0
Ապարան	17	14.08	66.9	2453.0	307.8	32	20.73	86.5	2727.3	648.2
Թալին	21	122.99	37.6	308.0	114.5	206	508.06	93.6	5494.5	678.7
Ծաղկահովիտ	3	0.08	1540.0	2420.0	1963.3	66	138.92	79.5	1000.0	437.2
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	84	67.16	70.6	3428.6	591.6	432	143.24	335.1	10833.3	2697.3
Մասիս	23	60.16	59.5	1437.5	160.1	165	93.25	200.0	11904.8	3402.0
Վեդի	40	100.01	59.2	9121.3	1375.4	294	233.04	207.0	10795.1	1991.5
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	21	30.10	61.2	1522.7	323.1	412	248.89	294.3	9090.0	1489.9
Բաղրամյան	38	135.94	70.9	2015.8	456.6	215	4680.84	90.6	2561.1	821.0
Վաղարշապատ	17	72.22	33.8	3190.0	626.6	264	157.52	444.4	11764.7	2058.8
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	2	2.19	191.6	331.7	261.7	345	107.07	199.8	1875.0	534.8
Ճամբարակ	15	7.55	287.6	17500.0	2435.1	11	11.15	60.5	953.3	350.6
Մարտունի	9	24.81	121.2	1591.0	395.2	18	3.34	51.1	2850.0	741.0
Սևան	7	4.75	172.5	2200.0	601.5	175	75.61	52.2	2134.8	364.6
Վարդենիս	26	25.86	118.2	1757.6	875.1	76	163.74	41.2	2575.1	358.1
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	14	3.73	630.3	5000.0	2430.8	61	38.71	170.4	6424.2	545.5
Գուգարք	7	1.67	418.0	1606.3	1444.8	76	23.59	234.6	6065.9	815.8
Սպիտակ	4	1.84	163.5	1050.0	442.8	21	9.50	250.0	5555.5	658.6
Ստեփանավան	4	9.28	167.8	1455.4	700.5	83	72.85	90.6	1686.6	421.7
Տաշիր	3	7.20	506.0	536.5	516.2	295	257.43	45.3	1384.4	187.5
<b>Կոտայքի մարզ</b>										
Աբովյան	111	208.32	76.1	5783.3	448.5	452	133.07	279.3	11942.7	3942.2
Եղվարդ	106	139.41	67.5	4722.6	664.4	540	351.35	174.4	11971.8	2563.6
Հրազդան	72	125.19	95.5	3750.0	511.1	136	136.43	130.5	10256.4	1100.3
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	7	5.26	124.6	329.5	224.7	93	101.65	252.0	1693.1	712.4
Ամասիա						22	44.70	40.9	261.0	144.7
Անի	4	4.54	88.1	305.3	184.7	72	77.08	110.6	546.9	468.4
Աշոցք						12	11.24	58.5	215.8	142.5
Արթիկ	19	48.55	47.2	1000.0	555.9	118	86.51	79.4	1428.6	552.7
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						30	34.23	92.6	1023.2	695.3
Կապան	7	20.73	77.0	473.0	235.6	16	17.48	120.0	841.6	463.9
Մեղրի	2	0.45	1150.0	1150.0	1150.0	22	16.03	193.0	3000.0	849.8
Սիսիան	15	13.90	69.0	1127.5	219.4	89	99.35	46.3	1977.4	526.2
<b>Վայոց ձորի մարզ</b>										
Եղեգնաձոր	129	474.92	18.7	2607.2	245.1	69	188.56	125.0	10000.0	1833.7
Վայք	16	29.92	25.5	201.3	59.9	28	12.89	58.8	1430.7	642.7



Տավուշի մարզ										
Բերր	4	1.51	217.5	360.4	307.8	86	22.50	213.3	3783.8	729.9
Իջևան	45	28.06	131.0	2400.0	535.6	31	11.54	267.5	9454.5	1644.5
Նոյեմբերյան	5	1.37	306.9	670.9	460.7	83	52.16	46.7	7368.4	1041.4

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	պայմանագրային գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	շուկայական գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Ստավելագույն	Միջին			Նվազագույն	Ստավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	23	21731.0	137.5	4996.2	2001.3	164	164086.6	130.7	22200.0	2587.3
Ապարան	13	9832.8	256.0	3333.3	1050.9	24	35433.5	124.1	609.6	390.1
Թային	1	485.0	235.0	235.0	235.0	21	38929.8	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ	4	1255.5	222.0	236.3	231.9	8	27874.0	60.0	214.3	95.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	30	32223.0	357.0	855.0	541.2	116	117486.6	173.9	7140.3	902.3
Մասիս	16	7064.7	666.7	3703.5	1990.9	241	181629.5	187.5	25000.0	1204.1
Վեդի	8	2744.4	155.5	2500.0	1151.2	111	113816.9	126.1	5000.0	663.6
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր	13	14312.8	376.5	3528.0	1585.0	172	203815.8	131.6	9090.9	1216.0
Բաղրամյան						15	17500.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	3	1942.0	1367.6	7656.0	3101.5	330	309060.0	197.4	26528.4	1530.3
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ	37	43864.6	51.8	193.8	122.4	19	16706.0	186.6	1084.3	683.4
Ճամբարակ	3	3051.8	102.4	369.3	191.9	10	9462.0	71.3	2286.2	147.0
Մարտունի	29	33321.0	112.6	377.1	228.0	75	76375.3	119.3	5000.0	277.4
Սևան	5	1173.8	241.8	1742.7	1229.4	18	23338.3	240.0	3110.4	349.4
Վարդենիս	23	33528.5	79.2	1470.0	562.2	18	31312.4	72.5	987.2	150.5
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի	10	1526.3	161.8	4200.0	2330.9	16	17703.0	114.3	1388.9	216.9
Գուգարք	23	1308.6	2105.4	4750.5	2551.4	25	22018.3	77.9	14083.3	1258.7
Սպիտակ						14	14527.0	104.9	1348.3	198.3
Ստեփանավան						7	7394.5	88.2	1666.7	176.0
Տաշիր	1	39.0	561.5	561.5	561.5	2	817.5	45.3	400.0	90.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Արովյան	136	55931.6	245.8	9800.0	3114.3	342	272425.9	264.5	35353.5	1957.2
Եղվարդ	222	224045.1	210.8	5037.5	1157.5	257	230107.8	173.6	27000.0	2853.1
Հրազդան	25	9887.7	416.7	4000.0	2343.7	33	26329.6	117.7	34848.5	1317.5
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան	24	8466.6	233.0	5232.6	1707.8	48	44163.7	113.6	18750.0	333.5
Ամասիա								45.3	274.7	72.0
Անի	1	1203.6	73.3	73.3	73.3	10	18784.7	67.9	180.6	217.6
Աշոցք						1	4727.0	40.8	144.0	65.0
Արթիկ	15	18804.7	122.1	2752.3	1095.8	32	24064.2	111.8	5000.0	217.2
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						19	16199.4	112.2	1700.0	367.1
Կապան	13	3950.7	54.5	3200.0	1462.3	10	7992.3	67.9	2638.9	379.3
Մեղրի	2	138.5	840.0	900.0	870.0	10	6640.0	68.5	632.9	270.2
Սիսիան	3	1693.0	359.0	580.8	418.8	32	25995.0	123.5	875.0	263.5

Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	24	19055.8	59.5	755.0	426.3	34	30864.5	96.7	7659.6	506.2
Վայք	1	24.0	1050.0	1050.0	1050.0	6	5958.0	120.7	1448.3	250.6
Տավուշի մարզ										
Բերդ						15	11026.1	75.8	810.0	131.4
Իջևան	18	15473.5	48.9	3000.0	1698.1	53	57992.3	74.1	14423.1	481.0
Նոյեմբերյան	6	2305.7	110.0	2200.0	1023.2	10	14793.8	125.0	1948.1	259.0

2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 8693 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.2 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 93.2 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից: 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքի քանակն աճել է 25.8 %-ով:

2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 298 բնակարանի, 273 անհատական բնակելի տան, 3353 հասարակական, 1633 արտադրական նշանակության օբյեկտի, 3053 միավոր հողի, 80 ավտոտնակի և 3 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 48 վարձակալության գործարքի քանակը 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 11.1 %-ով:

2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում վարձակալված 31076.35 հա հողերից 6.99 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 31069.36 հա հողերից 29253.28 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 1451.42 հա արդյունաբերական օբյեկտների, 40.47 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց ձորի մարզում՝ 14365.63 հա, որից 13785.52 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 21125 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 12.7 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 14.3 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (51.8 %), առանձնատների (22.3 %). հասարակական նշանակության օբյեկտների (12.0 %) և հողերի (7.5 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 12416 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2016 թվականի հունվար-նոյեմբեր ամիսների համեմատ աճել է 27.9 %-ով:

2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում գրավադրվել է 4894.72 հա մակերեսով հող, որից 55.99 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 3750.24 հա կամ 76.6 %-ը գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 3.15 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 2417.59 հա, որից 2406.58 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 2721 գործարք, որից 2143-ը՝ Երևանում: 2016 թվականի նույն

Ժամանակահատվածի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը աճել է 77.4 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 2.1 անգամ, իսկ մարզերում՝ 16.8 %-ով:

2017 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին, հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 23378 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը 2016 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 18.8 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 14.1 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (23.3 %):

**ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**